

**Եթե դուք գրադվել եք ինքնագրադվածությանը, որ դեպքում  
կստանաք միանվագ 300 լարի փոխհատուցումը**

**1. Ո՞րքան է օգնության չափը ինքնագրադվածների համար:**

Ինքնագրադվածները կստանան **միանվագ** օգնություն 300 լարի չափով:

**2. Ո՞ր դեպքում կհամարվեմ ինքնագրադված:**

Եթե դուք գրանցված եք ֆիզիկական անձ եկամուտների ծառայությունում, կամ գրանցված չեք և 2020 թվականի առաջին եռամսյակում (հունվար, փետրվար, մարտ) գրադվել եք տնտեսական գործնեությանը կամ/և ունեցել եք եկամուտ, որը հաստատվում է համապատասխան փաստաթղթերով, համարվում եք ինքնագրադված:

**3. Ո՞վ է համարվում եկամուտների ծառայությունում հաշվառված ֆիզիկական անձ և որ դեպքում է փոխհատուցվում:**

Այդպիսի անձիք համարվում են անհատ ձեռնարկատերերը, փոքր բիզնեսի կարգավիճակ ունեցող ձեռնարկատիրական անձիք և գրանցվող հաստատուն հարկ վճարող անձիք, ում 2020 թվականի առաջին եռամսյակում **արտացոլվում է տնտեսական գործնեություն** կամ/և եկամուտներ տնտեսական գործնեությունից, ինչպես նաև միկրոբիզնեսի կարգավիճակ ունեցող անձիք, ում տրվել է միկրոբիզնեսի կարգավիճակ մինչև 2020 թվականի ապրիլի 1-ը և ովքեր բյուջեից չեն ստացել ֆինանսավորում:

**4. Ի՞նչ է նշանակում տնտեսական գործունեությունը:**

Ֆիզիկական անձի կողմից իրականացվող ցանկացած գործունեություն, ինչը արվում է եկամուտ ստանալու համար համարվում է տնտեսական գործունեություն: Այսպիսով տնտեսական գործունեություն է համարվում անձի կողմից եկամուտների ծառայությանը ներկայացված հարկային/մաքսային հայտարարագիրը/հաշվարկը, հսկողության դրամարկղի սարքավորման/կտրոնին հավասար փաստաթղթի օգտագործումը, գրանցված ապրանքային գին/հարկ հաշիվ-ապրանքագիր/հարկային փաստաթուղթ կամ/և բյուջեում հարկային/ծառայության կողմից վարչական տուրքի վճարումը:

**5. <sup>o</sup> Եթե եկամուտների ծառայության մեջ գրանցված եմ որպես ինքնազբաղված, ում պիտի դիմեմ փոխհատուցում ստանալու համար:**

Եկամուտների ծառայության մեջ գրանցված ինքնազբաղված անձի դեպքում, **դուք առաջին փուլում պետք է սպասեք հաղորդագրության**, հատուկ ցուցակում հայտնվելու մասին, որը կստանաք հարկատուի համար լիազորված էջում– <https://eservices.rs.ge/>.

Այդպիսի հաղորդագրություն ստանալուց հետո, **ոչ ուշ քան մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը**, պետք է լրացնեք դիմում, որը 2020 թվականի մայիսի 15-ից հասանելի կլինի զբաղվածության գործակալության էլեկտրոնային կայքէջում:

**6. Ե՞րբ կկարողանամ 300 լարի փոխհատուցումը ստանալ:**

Եկամուտների ծառայությունում հաշվառված ինքնազբաղված անձանց փոխհատուցումը, տրվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմում ներկայացնելուց հետո:

**7. Եթե եկամուտների գործակալությունում չեմ գրանցվել որպես ինքնազբաղված ֆիզիկական անձ, ի՞նչպես ստանամ 300 լարի փոխհատուցումը:**

Փոխհատուցումը տրվում է այն դեպքում, եթե կկարողանաք Վրաստանում գրանցված հարկատու անձի կողմից (բացառությամբ ոչ ձեռնարկատիրական անձանցից) ներկայացնել հաստատող փաստաթուղթ այն մասին, որ 2020 թվականի առաջին եռամսյակում զբաղվել եք ինչ որ տնտեսական գործունեությամբ կամ/և ունեցել եք եկամուտ:

**8. Ի՞նչպես գործեմ և որ գործակալություն դիմեմ եկամուտների ծառայությունում չգրանցված անձի դեպքում, որ ստանամ 300 լարի փոխհատուցում:**

Եթե դուք գրանցված չեք հարկատու, **ոչ ուշ քան մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը** պետք է լրացնեք դիմում, որը 2020 թվականի մայիսի 15-ից կլինի հասանելի զբաղվածության գործակալության էլեկտրոնային կայքէջում և ներկայացրեք.

ա) Տեղեկատվություն 2020 թվականի առաջին եռամսյակում եկամտի աղբյուրի մասին  
և

բ) Վրաստանում հարկատու գրանցված (բացառությամբ ոչ ձեռնարկատիրական  
անձանցից) անձի կողմից տրված եկամտի աղբյուրը հաստատող փաստաթուղթ  
(ներառյալ բանկային քաղվածք, քաղաքապետարանի կամ ուրիշ վարչական մարմնի  
կողմից, անձին տրված ցանկացած գործնետության թույլտվություն/լիցենզիա և այլն):

### **9. Չգրանցված ինքնազբաղված անձը է՞րբ կստանա 300 լարի փոխհատուցումը:**

Երբ կլրացնեք դիմում փոխհատուցում ստանալու վերաբերյալ, նրա լրացնելուց  
առավելագույնը երկու շաբաթվա ընթացքում, զբաղվածության գործակալությունը  
աշխատանքային խմբի հետ միասին կքննարկի և վերջնական որոշում կայացնելու  
համար կներկայացնի միջգերատեսչական հանձնաժողովին: Փոխհատուցում ստանալ  
հնարավոր է լինում միջգերատեսչական հանձնաժողովի դրական որոշումից հետո,  
որոշումը ընդունելուց 10 աշխատանքային օրում:

### **10. Աշխատում էի, 2020 թվականի առաջին եռամսյակում աշխատավարձ եմ ստացել, բայց ազատվեցի աշխատանքից, ինչպես նաև ունեի փոքր բիզնես և բավարարում եմ 300 լարի փոխհատուցում ստանալու նախադրյալներին: Ու՞նեմ թե ոչ իրավունք ստանամ ինչպես ամենամսյա 200 լարին, այնպես էլ ինքնազբաղվածների համար նախատեսված 300 լարի փոխհատուցումը:**

Երկու փոխհատուցումը միաժամանակ չեք կարող ստանալ և այս դեպքում դուք  
կունենաք իրավունք ստանալու 200 լարիանոց փոխհատուցումը:

### **11. Աշխատում եմ և հիմա էլ ստանում եմ աշխատավարձ, ինչպես նաև ունեի փոքր բիզնես և բավարարում էի 300 լարի փոխհատուցում ստանալու նախադրյալները: Ու՞նեմ թե ոչ իրավունք ստանալու նշված փոխհատուցումը:**

Այս դեպքում 300 լարիանոց փոխհատուցում չեք կարող ստանալ: